

# Սովորել Աննա Ֆրանկի հետ

## Գրի՛ր, որ լսելի դառնաս:

Աշխատանքային տետր 2

# Աննը Ֆրանկի կյանքը

Հետևի՛ր Աննը Ֆրանկի կյանքին: Ճի՛շտ գրիր վերնագրերը: Ընտրի՛ր այս էջի վերջում նշված վերնագրերից:

*Վերնագիր՝*

## 1929 թ



1929 թ. հունիսի 12-ին Աննը Ֆրանկը ծնվում է Մայնի Ֆրանկֆուրտում, Գերմանիայում: Ֆրանկները հրեական ընտանիք են:

## 1933 թ

1933 թ. Ադոլֆ Հիտլերը գալիս է իշխանության: Ըստ նրա՝ հրեաներն են մեղավոր համատարած գործազրկության և աղքատության մեջ: Հիտլերը բռնապետ է: Օտտոն ու Էդիթն այլևս ապահով չեն զգում Գերմանիայում և որոշում են լքել երկիրը: Տեղափոխվում են Ամստերդամ:

*Վերնագիր՝*

## 1934 թ/1938 թ



Աննըն Հոլանդիայում զգում է իրեն ինչպես տանը: Սովորում է հոլանդերեն, շատ ընկերներ է ձեռք բերում: Ամռանը հաճախ ընտանիքով ծովափ են գնում:

## Զգալ ինչպես տանը

Քեզ ի՞նչ է պետք, որպեսզի ինչ-որ մի տեղում զգաս քեզ ինչպես տանը:

*Այստեղ գրի՛ր պատասխանը:*

*Ճիշտ տեղում գրի՛ր հետևյալ վերնագրերը:*

Կյանքը Ամստերդամում

Ծնվում է Աննը Ֆրանկը

## 1938/1939 թ



Հիտլերն ուզում է մեծացնել Գերմանիայի տարածքը, այլ երկրներ է գրավում: 1939 թվականի սեպտեմբերին Լեհաստանի վրա են հարձակվում մի կողմից՝ գերմանական, մյուս կողմից՝ ռուսական զորքերը: Անգլիան ու Ֆրանսիան պատերազմ են հայտարարում Հիտլերին: Սկսվում է Երկրորդ համաշխարհային պատերազմը:

## 1940 թ



1940 թվականի մայիսին սկսվում է պատերազմը: Գերմանական զորքերը գրավում են Հոլանդիան: Աննըն ու նրա ընտանիքը վտանգված են: Երկրից հեռանալն էլ գրեթե անհնար է:

## խտրականություն

Ի՞նչ է «խտրականությունը» քեզ համար:

*Գրի՛ր այստեղ պատասխանը՝*

Վերնագիր՝

## 1942 թ



Հոլանդիայում ևս խտրականություն կա հրեաների նկատմամբ: Աննըն ու Մարգոն ստիպված են բաժանվել ոչ-հրեա հասակակիցներից ու տեղափոխվել հատուկ հրեաների ավագ դպրոց Ամստերդամում:

Վերնագիր՝

## 1942 թ



Մարգոն ծանուցագիր է ստանում: Պետք է մեկնի Գերմանիա՝ աշխատանքային ճամբար: Եթե Մարգոն չգնա, ամբողջ ընտանիքը կձերբակալվի: Օտտոն ու Էդիթը չեն ուզում, որ Մարգոն գնա: Հուլիսի 6-ին Ֆրանկերի ընտանիքը թաքնվում է Պրինսենխրախտում:

*Ճիշտ տեղում գրի՛ր հետևյալ վերնագրերը:*

**Ապրել պատերազմի ժամանակ**

**Թաքստոց**

# Մեր Հետնատանը



Աննըն թաքստոց է բերում իր օրագիրը, որ նա նվեր է ստացել ծննդյան տասներեքերորդ տարեդարձի առիթով:



Հետնատունը

Մեկ այլ ընտանիք էլ է ապահով տեղ փնտրում: Դրանք են Հերման և Աուգյուստ վան Պելսերն ու նրանց որդի Պետերը:



Սկզբում Աննըն Պետերին «ձանձրալի ու ամաչկոտ մի լոլոզ տղա» է համարում, «դանդալոշի մեկը»: Հետո՝ 1944 թ.-ին, սկսում է ավելի դրական արտահայտվել նրա մասին: Երջանիկ է զգում, երբ տղան նայում է իրեն, և սիրահարվում է Պետերին: Այդ պահին Աննըն տասնհինգ տարեկան է, իսկ Պետերը՝ տասնութ:



«Կիտտի, ես նման եմ սիրահարված մարդու, որն իր սիրելիից բացի ուրիշ բանի մասին չի խոսում:»

3-ը մարտի, 1944 թ

ԱՆՈՒՆ՝
**Պետեր վան Պելս**

Հերմանի և Աուգյուստի որդին

հատկանիշներ՝ հանգիստ, ամաչկոտ, քչախոս

սիրում է՝ փայտագործություն և կենդանիներ

ուրիշներ նրան այսպես են բնութագրում՝ վստահելի, պատրաստակամ և խիզախ

## Դու ինքդ քեզ ինչպե՞ս կբնութագրես:

Այստեղ գրի՛ր երկու հատկանիշ՝

Հիմա ուրիշին հարցրո՛ւ՝ ո՞ր երկու հատկանիշներով ինքը քեզ կբնութագրեր:

ԱՆՈՒՆ՝
**Աննը Ֆրանկ**

Օտտո ու Էդիթ Ֆրանկերի դուստրը, Մարգոյի քույրը

հատկանիշներ՝ զգայուն, կենսուրախ, երբեմն մռայլ

սիրում է՝ կարդալ ու գրել

երբեմն իրեն զգում է՝ միայնակ և ընկճված

ուրիշներ նրան այսպես են բնութագրում՝ ուրախ աղջիկ, որը, սակայն, ունի նաև իր լուրջ կողմը

# Մեծ վեճ, փոքր սեղանի պատճառով



Սա Ֆրից Պֆեֆֆերն է: Նա Ֆրանկերի և վան Պելսերի ծանոթներից մեկն է, որը նույնպես ստիպված է թաքնվել: Սենյակ է կիսում Աննայի հետ: Աննան գոհ չէ, քանի որ սենյակը շատ փոքր է:

Ե՛վ Աննան, և՛ Ֆրիցը սիրում են աշխատել իրենց սենյակի սեղանիկի մոտ: Աննան Ֆրիցին հարցնում է, արդյոք կարող է սեղանիկից շաբաթը երկու անգամ օգտվել: Ֆրիցը պատասխանում է՝ «ո՛չ:» Աննան զայրանում է և հոր աջակցությամբ փորձում է հասնել իր ուզածին: Ստացվում է: Բայց այս դեպքը պղտորում է մթնոլորտը:

ԱՆՈՒՆ՝

## Ֆրից Պֆեֆֆեր

հատկանիշներ՝ փակ մարդ, ինքնավստահ ապավինում է իր հավատքին՝ Հետնատանը, ամեն երեկո աղոթում է մասնագիտությունը՝ ատամնաբույժ վախենում է կատուներից

Միպ Խիսի նկարագրությամբ՝ առույգ, սիրուն ու բարեհամբույր տղամարդ

Աննայի նկարագրությամբ՝ եսասեր ու գոռոզամիտ





«Թեև կատաղությունից պայթում եմ, բայց չի կարելի ցույց տալ: Զայրույթից ուզում եմ ոտքով դոփել գետնին, գոռալ...»

30-ը հունվարի, 1943 թ.

## Նման դեպքում, դու ի՞նչ կանեիր:

Պատկերացրո՛ւ՝ ինչ-որ մի բան քեզ զայրացնում է: Ինչպե՞ս ես արտահայտում զայրույթդ:

# Մոտեցի՛ր ցուցահանդեսին

Հանգիստ նայի՛ր ցուցահանդեսը, և կարդա՛ տեքստերը: Դրանից հետո կարդա՛ հետևյալ տեքստն ու պատասխանի՛ր հարցերին:

## Թաքստոցայինները

Լրացրո՛ւ՝

Հետնատան բնակիչները թաքնված են մնում ........... օր: Ամեն օր պիտի ................. մնան: Դուրս նայելը շատ ..................... է:



*Հիշո՞ւմ ես թաքստոցայինների անունները: Յուրաքանչյուր լուսանկարի տակ գրի՛ր համապատասխան անունը: Եթե չես հիշում, կարող ես նորից նայել ցուցահանդեսը:*

«Մենք այստեղ փակված ենք լինում, աշխարհից մեկուսացված, վախերով ու մտահոգություններով համակված...»,

17-ը ապրիլի, 1944 թ.



## Օգնողները

Օտտոյի աշխատակիցներից չորսն օգնում են Հետնատան բնակիչներին: Նրանք Հետնատուն են բերում սնունդ և, երբեմն, գրքեր ու ամսագրեր:

Դու ի՞նչ կանեիր:

*Օգնողներն իրենց կյանքն են վտանգում, օգնելով Հետնատան բնակիչներին: Դու երբևէ ուրիշին օգնե՞լ ես: Նկարագրիր դրվագը:*

*Դատարկ վանդակներում գրի՛ր՝ քո կարծիքով ի՞նչ զգացողություններ են ապրել Հետնատան բնակիչները:*

«Եթե կարողանամ ես ես լինել, լրիվ գոհ կլինեմ:» Աննը 11-ը ապրիլի, 1944 թ.

Աննըն իր օրագրում շատ է գրում իր մասին: Գրում է իր արտաքինի, իր նախասիրությունների և իր զգացողությունների մասին: Ունի «նպատակ, կարծիք, հավատք և սեր», և ամենից շատ ուզում է «ինքը լինել»:

պատանի
փախստական
ընթերցող
խանդավառ
հրեա



ընկերուհի
թիթիզ
աղջիկ
գրող
դուստր
քույր
սիրահարված
կատակասեր
հետաքրքրասեր
հոլանդուհի

## «Լինել դու»

*Ներքևի վանդակներում լրացրո՛ւ հնարավորին շատ բառեր, որոնք բնութագրում են քեզ:*

## Ուրիշներն ի՞նչ են ասում քո մասին:

Հիտլերն ու նացիստները հրեաներին են մեղադրում Գերմանիայի բոլոր դժվարություններում:

## Հակասեմիտիզմ

«Հակասեմիտիզմ» նշանակում է՝ ատելություն հրեաների հանդեպ: Նացիստները հրեաներին ատում են: Խտրականության մի ձև է: Հակասեմիտիզմի հոմանիշ տո՛ւր՝



«Մի օր այս ահավոր պատերազմը պիտի ավարտվի, մի օր մենք նորից կլինենք պարզապես մարդիկ, ոչ թե հրեաներ:»,

Աննը Ֆրանկ,
11-ը ապրիլի, 1944 թ.

Թաքստոցայինները տարվում են Վեստերբորկ ճամբար Հոլանդիայում:

1

1944 թվականի օգոստոսի 4-ին ոստիկանությունը ներխուժում է Հետնատունն ու ձերբակալում բնակիչներին: Ինչ-որ մեկը նրանց մատնել է, բայց մինչև այսօր հայտնի չէ, թե ով:

2

Այնտեղից գնացքով տարվում են Լեհաստան՝ Աուշվից-Բիրկենաու համակենտրոնացման ճամբար: Այս ճամբարում Օտտոյին բաժանում են Աննըից, Մարգոյից ու Էդիթից

3

Հետո, Աննըն ու Մարգոն տարվում են Գերմանիա՝ Բերգեն-Բելսեն համակենտրոնացման ճամբար:

1945 թվականի փետրվար ամսին Աննըն մահանում է տիֆ վարակիչ հիվանդությունից: Նրա մայրն ու քույրը նույնպես մահանում են: Հետնատան բնակիչներից միայն Օտտո Ֆրանկն է կենդանի մնում պատերազմում:






Ձերբակալությունից հետո, ի՞նչ է պատահում օրագրի հետ:
1945 թվականի մայիսի 5-ին, գերմանական զորքերը հանձնվում են: Հոլանդիան ազատագրվում է: Մի քանի ամիս հետո Երկրորդ համաշխարհային պատերազմը վերջապես ավարտված է:
Երբ Օտտո Ֆրանկը վերադառնում է Ամստերդամ, Միպ Խիսը նրան հանձնում է Աննըի օրագիրը: Երկու տարի հետո Օտտոն հրատարակում է օրագիրը:

2

**ՊԱՏԱՍԽԱՆԻ՛Ր ՔԵԶ ՄԱՍԻՆ ՀԵՏևՅԱԼ ԵՐԿՈՒ ՀԱՐՑԵՐԻՆ՝**

Ինչի՞ց ես վախենում:
Գրի՛ր երկու տարբեր վախերի մասին

.................................................................

.................................................................

Դպրոցն ավարտելուց հետո ինչո՞վ կուզես զբաղվել, ի՞նչ կուզես դառնալ:

.................................................................

.................................................................

# հայկու թվայկու

Առօրյա կյանքում դու ավելի շատ ես գրում քան քեզ թվում է:
Հիշի՛ր միայն ինչքա՛ն հաղորդագրություններ, էլեկտրոնային նամակներ:
Թվայկուն հիմնված է հայկու կոչված ճապոնական բանաստեղծության հին տեսակի վրա: Երեքտողանոց, 140 նիշը չանցնող հաղորդագրությունները կոչվում են թվայկու՝ համացանցային բանաստեղծություն:

Օրինակի համար՝

*Աննըի ցուցահանդես*
*շրջագծված ընդգծված բառեր*
*ես զարմացած եմ*

アンネの隠れ家に
展示された日記とその説明に
大きく感嘆する

Թվայկուն պատմում է անձնական բաների մասին, որոնք կարող են հետաքրքիր լինել ուրիշներին նույնպես: Պատկերացրո՛ւ՝ ուզում ես աշխարհի մյուս ծայրին գտնվող մեկին պատմել, թե դու որտեղ ես, և ինչ ես տեսնում:

*Մտածի՛ր՝ ո՞րտեղ եմ հիմա, ո՞ւմ եմ տեսնում, ի՞նչ եմ տեսնում, ի՞նչ եմ զգում այս պահին:*
*Գրի՛ր այստեղ քո թվայկուն: Կամ գրի՛ր թվայկուն քո հեռախոսի մեջ, և ուղարկի՛ր ընկերոջդ/ընկերուհուդ:*



## *Ստացվե՞ց:*

*Կիսվի՛ր քո թվայկուն ամբողջ աշխարհի հետ: Տեղադրի՛ր քո թվայկուն Աննը Ֆրանկի ֆեյսբուքյան էջում: Այդ էջն ունի ավելի քան 20.000 հետևորդներ: Սկսի՛ր, նշելով անուն-ազգանունդ և երկիրդ, հետո գրի՛ր «թվայկու» բառը, և տեղադրի՛ր քո թվայկուն:*

# Բանաստեղծություն, Աննը Ֆրանկի մասին:

Պատասխանի՛ր հետևյալ յոթ հարցերին՝

1 Գրի՛ր Աննըին բնորոշող երկու կամ երեք **հատկանիշ**:
2 Ո՞րն է նրա **կապը** ուրիշների հետ՝ դո՞ւստր է, քո՞ւյր: Գրի՛ր մեկ տարբերակ:
3 Գրի՛ր Աննըի **սիրած զբաղմունքներից** երկուսը կամ երեքը, որոնցով զբաղվում է նաև Հետնատանը:
4 Գրի՛ր երեք **զգացողություն**, որոնք Աննըն ունեցել է Հետնատանը, և դրական, և բացասական:
5 Գրի՛ր՝ ինչի՞ց է **վախենում** նա:
6 Գրի՛ր երկու կամ երեք **հույս**, որ Աննըն ունի իր կյանքի հանդեպ:
7 Գրի՛ր՝ որտե՞ղ է **ապրում** նա:



Աննը ................................................................

1 ................................................................

2 ................................................................

3 սիրում է ................................................................

4 ................................................................

5 ................................................................

6 ................................................................

................................................................

7 ................................................................

Ֆրանկ ................................................................



Օրինակ՝

Մարգո

հանգիստ և լուրջ, ուսումնասեր

Օտտոյի ու Էդիթի դուստրը

սիրում է կարդալ և սովորել

լռակյաց, հասկացող

վախենում է հայտնաբերվելուց

խաղաղություն է ուզում ու

բուժքույր դառնալ

Ամստերդամ

Ֆրանկ

# Բանաստեղծություն՝ քե՛զ մասին:

Բանաստեղծություն քե՛զ մասին:
Պատասխանի՛ր հետևյալ հարցերին
և բացահայտի՛ր քո սեփական
կենսագրական բանաստեղծությունը՝

1 Գրի՛ր անունդ:
2 Գրի՛ր քեզ բնորոշող երկու կամ երեք հատկանիշ:
3 Ի՞նչ կապի մեջ ես ուրիշների հետ: Մեկի ընկե՞ր կամ ընկերուհի՞ ես: Դո՞ւստր կամ որդի՞: Եղբա՞յր կամ քո՞ւյր: Գրի՛ր կապի մի տեսակ:
4 Գրի՛ր սիրած բաներից երկուսը կամ երեքը:
5 Գրի՛ր երկու բան, որոնցից վախենում ես:
6 Գրի՛ր քո երազանքներից երկուսը կամ երեքը, կամ գրի՛ր՝ ինչ ես ուզում դառնալ:
7 Գրի՛ր՝ որտեղ ես ապրում:
8 Գրի՛ր ազգանունդ:

1 ..........................................................

2 ..........................................................

3 ..........................................................

4 սիրում է ..........................................................

5 վախենում է ..........................................................

6 երազում է ..........................................................

7 ..........................................................

8 ..........................................................

*Տեքստեր*
Աննը Ֆրանկի Հիմնադրամ
Լիս Սխիպպերս
Սաննը Վերստրատը

*Իրագործում*
Յոսեֆին դը Ման
Ինգըր Սխապ

*Ձևավորում*
Յոստ Լակ
Սկեպյա, Պիտեր Մինեուր

*Լուսանկարներ*
Յիուլ Հոնդիուս

*Թարգմանություն*
Աննա Մարիա Մատտաար

*Իրավունքներ*
Աննը Ֆրանկի ընտանիքի լուսանկարներ՝ © Աննը Ֆրանկի Հիմնադրամ, Ամստերդամ/ Աննը Ֆրանկի Ֆոնդ, Բազել
Աննը Ֆրանկի գրած տեքստերը © Աննը Ֆրանկի Ֆոնդ, Բազել

© Յիուլ Հոնդիուս լուսանկարչություն